# ՎՐԱՍՏԱՆԻ ՆԵՐԳՐԱՎՈՒՄԸ ԹՈՒՐՔ-ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԱՇԻՆՔՈՒՄ

*Լիա Էվոյան*[*]

Հարավային Կովկասը շարունակում է մնալ Թուրքիայի արտաքին քաղաքականության կարևորագույն թիրախներից մեկը: Դա ամրագրված է 2011թ. հունիսի 12-ի Թուրքիայի խորհրդարանական ընտրություններին Արդարություն և զարգացում կուսակցության (ԱԶԿ) հրապարակած նախընտրական ծրագրում (*Seçim Beyannamesi*), որտեղ Հարավային Կովկասը կարևորությամբ Թուրքիային սահմանակից շրջաններից երրորդն է[1], իսկ Ադրբեջանի և Վրաստանի հետ հարաբերությունների հետագա զարգացման նպաստումը ներկայացված է որպես ԱԶԿ արտաքին քաղաքականության առաջնային ուղեգծերից մեկը[2]:

Հարկ է նշել, որ եթե 2010թ. ստորագրված թուրք-ադրբեջանական ռազմաստրատեգիական համաձայնագրով Ադրբեջանի հետ հարաբերությունները հասել են իրենց գագաթնակետին, ապա Թուրքիայի հարաբերությունները Վրաստանի հետ դեռևս չունեն նման իրավական ձևակերպում: Այնուհանդերձ, թուրք-ադրբեջանական հետևողական քաղաքականության արդյունքում Վրաստանն աստիճանաբար ներգրավվում է նրանց ռազմաքաղաքական դաշինքում:

---

[*] ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի հայցորդ:

[1] 2011 Haziran 12 Genel Seçimleri Seçim Beyannamesi, www.akparty.org

[2] Նույն տեղում:

Թուրքիայի համար Վրաստանը կարևոր ռազմավարական նշանակություն ունի որպես տարանցիկ երկիր: Վրաստանի տարածքը ծառայում է որպես միջանցք դեպի Ադրբեջան և միջինասիական երկրներ հատկապես Թուրքիա-Հայաստան-Ադրբեջան փակ սահմանների պարագայում:

Այս առումով առանձնահատուկ ռազմաստրատեգիական նշանակություն ունի Վրաստանի հայաբնակ Սամցխե-Ջավախեթիի վարչական շրջանը, որտեղ Թուրքիան վարում է ժողովրդագրական պատկերի փոփոխությանը նպատակաուղղված քաղաքականություն՝ աջակցելով 1944 թվականից տեղահանված թուրք-մեսխերի (*Ahıska Türkleri*) «հայրենադարձությանը»: Հատկանշական է, որ դեռևս 1999թ. ԵԽ անդամակցելու ժամանակ նման պարտավորություն ստանձնած Վրաստանն առաջարկում է թուրք-մեսխերին վերաբնակեցնել երկրի ողջ տարածքում, սակայն Թուրքիան հատկապես պնդում է Սամցխե-Ջավախեթիի շրջանում նրանց հաստատվելու անհրաժեշտությունը: Ջավախքում թուրք-մեսխերի զանգվածային բնակեցման ու մեծամասնություն կազմելու հեռանկարը կհանգեցնի ամբողջական թյուրքական միջանցքի ստեղծմանը: Արդյունքում՝ Սամցխե-Ջավախեթի - Քվեմո-Քարթլի (Ադրբեջանին սահմանակից ադրբեջանաբնակ տարածք) վարչական շրջանները զուգահեռ գծով կմիացնեն միմյանց Ադրբեջանն ու Թուրքիան[1]՝ միաժամանակ հատելով Հայաստանը հյուսիսին կապող ուղղահայացը: Նաև հատկապես Վրաստանի տարածքի Սամցխե-Ջավախքի տարածքն է ընտրվել աշխարհառազմավարական նշանակության էներգահամակարգերը՝ Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղը և Բաքու-Թբիլիսի-Էրզրում գազատարը գործարկելու համար: Ներկայումս այս տարածքում է կառուցվում Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթուղին, որի շինարարական աշխատանքների ավարտը

[1] *Էդուարդ Աբրահամյան,* «Վրաստանի ադրբեջանցիները. ակտիվ նախապատրաստություն սպասված ապստամբության», www.armtown.com

նախատեսվում էր 2012թ. վերջին: Ի դեպ, այս նախագծի շնորհիվ Նախիջևանի Ինքնավար Հանրապետությունը ձեռք կբերի անմիջական ցամաքային կապ Ադրբեջանի հետ՝ էլ ավելի դյուրացնելով Թուրքիա-Ադրբեջան ռազմավարական համագործակցությունը:

Ադրբեջանի համար ևս Վրաստանն ունի ռազմավարական նշանակություն որպես իր ռազմավարական դաշնակից Թուրքիային և այդ երկրի միջոցով նաև Արևմուտքին կապող օղակ: Ադրբեջան-Վրաստան հարաբերություններում առանցքային դեր է խաղում միմյանց տարածքային ամբողջականության ճանաչման սկզբունքի վրա հիմնված փոխադարձ շահը: 2008թ. «Հնգօրյա պատերազմի» արդյունքում Վրաստանից Հարավային Օսիայի և Աբխազիայի անկախացման դե-յուրե ճանաչումը և հայկական տարածքների նկատմամբ Ադրբեջանի վերահսկողության կորուստը Վրաստանին և Ադրբեջանին միավորում է միևնույն խնդրի շուրջ: Վրաստանին և Ադրբեջանին դե-յուրե միավորում է նաև անդամակցությունը ԱՊՀ-ին իբրև այլընտրանք ստեղծված ՎՈԻԱՄ քաղաքական միավորմանը[1]:

Բաքուն իր ազդեցության լծակներն ամրապնդելու և ընդլայնելու հստակ քաղաքականություն է վարում՝ օգտագործելով տնտեսության որոշակի ոլորտներում, մասնավորապես էներգետիկայի բնագավառում Թբիլիսիի համար անայլընտրանք համագործակցության իրողությունը:

Բաքվի ազդեցության լծակներն ամրապնդելուն է ծառայում նաև Վրաստանի ազգային փոքրամասնությունների շարքում իր թվաքանակով առաջինը համարվող ադրբեջանական համայնքը, մասնավորապես ադրբեջանաբնակ Քվեմո-Քարթլիի (Բորչալու) շրջանը, որի ադրբեջանական համայնքն ունի նաև Թուրքիայի աջակցությունը: Հարկ է նշել, որ աշխարհագրորեն արևելքից Ադրբեջանին,

[1] *Сергей Маркедонов,* Соседи Грузии: до и после «Пятидневной войны», 22.08.2008, http://www.politcom.ru

հարավից Հայաստանին, արևմուտքից Ջավախքին սահմանակից և հյուսիսից Վրաստանի մայրաքաղաքին կից Քվեմո-Քարթլի տարածաշրջանն ադրբեջանցիները համարում են «հերոս թուրքերի հայրենիքը» և որակում որպես «վիճելի տարածք Ադրբեջանի և Վրաստանի միջև», որն «անարդարացիորեն ԽՍՀՄ օրոք տրվեց Վրաստանին»[1]: Այս առումով ուշագրավ է Բորչալուի ադրբեջանական համայնքի կայքէջում պարբերաբար հանդիպող «Բորչալուն Ադրբեջանից ամենակարճ ճանապարհն է դեպի Թուրքիա» արտահայտությունը[2]:

Համաձայն Վրաստանի տնտեսական զարգացման նախարարության վիճակագրության դեպարտամենտի 2008թ. կատարած հետազոտությունների՝ մանր ձեռնարկությունների դրամաշրջանառության ծավալներով Թբիլիսիից հետո առաջատարը Քվեմո-Քարթլիի շրջանն է, որին բաժին է ընկնում ամբողջ երկրի մանր ձեռնարկությունների դրամաշրջանառության 13%-ը[3]: Հարկ է նշել, որ Քվեմո-Քարթլիի մասնավոր, այսինքն՝ ադրբեջանական ձեռնարկությունների աջակցությունն իրականացվում է Բաքվից ֆինանսավորվող ադրբեջանական հասարակական մի շարք կազմակերպությունների միջոցով:

Այսպիսով, թուրք-ադրբեջանական հետևողական քաղաքականության շնորհիվ Վրաստանն աստիճանաբար ներգրավվում է նրանց ռազմաքաղաքական դաշինքում, ինչի համար նախադրյալ է ծառայում բարձր մակարդակի համագործակցությունը գրեթե բոլոր ոլորտներում:

Այսպես, էներգետիկ ոլորտում ռազմավարական մեծ նշանակություն ունեցող Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթատար խողովակաշարը Կասպից ծովը կապում է Միջերկրական ծովին[4], իսկ Բաքու-Թբիլիսի-Էրզրում գազամուղի շուրջ համագործակցությունը հանգու-

[1] www.borchali.net
[2] Նույն տեղում:
[3] http://www.apsny.ge/news/1214000731.php
[4] Նույն տեղում:

ցում է երեք երկրներին: 2010թ. Ադրբեջանի ու Վրաստանի բարձրագույն ղեկավարները որոշում կայացրին երկու երկրների միասնական էներգահամակարգ ստեղծելու մասին[1]: Միաժամանակ, թուրքական *EMCT Pazarlama Inşaat Taahüt Ticareti (EMCT)* կազմակերպությունը Վրաստանի էներգետիկայի նախարարության հետ կնքեց համաձայնագիր, որի շրջանակներում սկսվել է Արևմտյան Վրաստանի տարածքում Գուբազոուլի ՀԷԿ կառուցումը[2]: 2012թ. հունիսի 26-ին Թուրքիայի և Ադրբեջանի էներգետիկայի նախարարները ստորագրեցին 7-8 մլրդ արժողությամբ Տրանսանատոլիական (*TANAP*) նոր գազատարի կառուցման համաձայնագիր, որը ենթադրում է ադրբեջանական բնական գազը թուրք-վրացական սահմանով արտահանել Եվրոպա՝ միացվելով «Նաբուկկո» նախագծին, թեպետ «Նաբուկկո» ծրագրի իրագործման հետ կապված մի շարք խնդիրների առկայությունն առայժմ հարցականի տակ է դնում Տրանսանատոլիական գազատարի գործարկումը ևս:

Ակնհայտ է, որ այս ծրագրերը միտված են չեզոքացնելու Ռուսաստանի էներգետիկ մենաշնորհը Հարավային Կովկասում, ինչն իր հերթին կհանգեցնի տարածաշրջանի պետությունների ոչ միայն տնտեսական, այլև քաղաքական կախվածության նվազմանը ՌԴ-ից[3]:

Առևտրի ոլորտում Թուրքիան ներկայումս համարվում է Վրաստանի առաջին գործընկերը՝ զբաղեցնելով Ռուսաստանի երբեմնի տեղը: 2002-2010թթ. երկկողմանի առևտրային ծավալը նշանակալի աճ է արձանագրել՝ հասնելով $240 մլն-ից մինչև 1 մլրդ-ի[4]: Բացի այդ, Թուրքիան իր ներդրումներով Վրաստանում գրավում է երկրորդ տեղն ԱՄՆ-ից հետո: Թուրքական ներդրումները ներառում են շինարարական (այդ թվում օդանավակայանի տերմինալների վերանորո-

[1] *Натик Алиев:* Азербайджан и Грузия намерены соединить энергосистемы, http://www.rus.ghn.ge/news-7648.html

[2] ГЭС на реке Губазоули будут строить турки, 29.08.2011, www.georgiatimes.info

[3] *Justyna Glogowska,* Turkey and Georgia: Strategic Connections, BilGESAM, 23 March 2012.

[4] Dış Ticaret İstatistikleri, Türkiye İstatistik Kurumu, www.tuik.gov.tr

գումը), ապակեգործական, հեռուստահաղորդակցության ոլորտները, ինչպես նաև փոքր և միջին բիզնեսի տարատեսակ կազմակերպությունների ստեղծումը Վրաստանում: Այս պահին ամենամեծ ներդրումը կատարված է Կարս-Թբիլիսի երկաթգծի և Ռիզե-Փոթի օպտիկամանրաթելային մալուխի նախագծերի իրականացման համար[1]: Բացի այդ, Թուրքիան պատրաստվում է մի շարք էլիտար արվարձանային ավաններ կառուցել հենց մայրաքաղաք Թբիլիսիի շուրջը[2]:

Ռազմական ոլորտում Թուրքիան Վրաստանի, ինչպես նաև Ադրբեջանի ռազմամթերքի հիմնական մատակարարն է և ունի ռազմական օբյեկտներ երկու պետություններում:

Կրթական ոլորտում թուրք գործարարների աջակցությամբ Վրաստանում գործում են մի քանի ավագ դպրոցներ և Քվեմո-Քարթլիի շրջանում մեկ մասնավոր համալսարան: Ամեն տարի Վրաստանի քաղաքացի բազմաթիվ ուսանողներ՝ վրացական և ադրբեջանական ծագմամբ, կրթաթոշակ են ստանում Թուրքիայի կառավարության կողմից թուրքերեն սովորելու և Թուրքիայում վերապատրաստվելու համար: Նշենք, որ դա բավական լուրջ գործոն է Վրաստանում Թուրքիայի ազդեցության հզորացման համար:

Վրաստանն իր հերթին, 2008թ. ռուս-վրացական պատերազմի արդյունքում մեկուսացվելով Ռուսաստանից և պաշտոնապես հրաժարվելով ԱՊՀ անդամակցությունից, իր հետագա զարգացումը կապում է Արևմուտքի (վարելով եվրատլանտյան կառույցներին համարկվելու քաղաքականություն), իսկ տարածաշրջանային մակարդակում՝ Թուրքիայի և Ադրբեջանի հետ: Թուրքիան Վրաստանի համար դիտարկվում է որպես կապող օղակ ՆԱՏՕ-ի, Եվրամիության և արևմտյան այլ կառույցների հետ, իսկ Ադրբեջանը համարում է կենսական նշանակության էներգակիր: Ուստի, Վրաստանը վարում է բազմա-

[1] *Justyna Glogowska,* Turkey and Georgia: Strategic Connections, BilGESAM, 23 March 2012.
[2] Турки будут строить мини-города около Тбилиси, 02.09.2011, www.georgiatimes.info

կողմանի համագործակցություն և՛ Ադրբեջանի, և՛ Թուրքիայի հետ: Վրաստանը, թեև միակողմանիորեն, պաշտոնապես երկու պետություններին ճանաչել է որպես ռազմավարական դաշնակիցներ:

2010թ. հետո Թբիլիսին ասպարեզ է բերել ու շրջանառության մեջ դրել Վրաստան-Ադրբեջան համադաշնության նախագիծը՝ հիմք ընդունելով երկկողմ հարաբերությունների համապատասխան բնույթը տնտեսությունից մինչև արտաքին քաղաքականության ոլորտներում[1]:

Սրանք են այն գլխավոր նախադրյալները, որոնք թույլ են տալիս յուրաքանչյուր տարի երեք երկրների ԱԳՆ ղեկավարների ժամանակացուցային հանդիպումներում Թուրքիա-Ադրբեջան-Վրաստան հարաբերությունները ձևակերպել նոր համաձայնագրերի տեսքով: Մասնավորապես, 2012թ. հունիսի 8-ին Տրապիզոնում Թուրքիայի, Վրաստանի և Ադրբեջանի արտգործնախարարները ստորագրեցին հռչակագիր (*TRABZON DECLARATION*), որը, հիմնվելով ինքնիշխանության և տարածքային ամբողջականության, հակամարտությունների խաղաղ կարգավորման, միջազգայնորեն ճանաչված սահմանների անձեռնմխելիության, ինքնիշխան պետությունների հավասարության, պետության տարածքային ամբողջականության կամ քաղաքական անկախության դեմ սպառնալիքի կամ ուժի կիրառման ձեռնպահության սկզբունքների վրա, հաստատագրում է հետևյալ դրույթները[2].

- Շարունակել միջազգային կազմակերպություններում միմյանց թեկնածություններին աջակցելու քաղաքականությունը; մասնավորապես՝ աջակցել Ադրբեջանի Հանրապետությանը որպես ՄԱԿ Անվտանգության խորհրդի ոչ մշտական անդամի՝ տարածաշրջանի ընդհանուր շահերը սպասարկելու նպատակով, աջակցել միմյանց եվրոպական և եվրատլանտյան կառույց-

[1] *Саакашвили:* Азербайджан и Грузия должны стремиться к конфедерационному сотрудничеству, http://www.rus.ghn.ge/news-7644.html, Тбилиси подтвердил желание создать конфедерацию с Баку, http://www.georgiatimes.info/articles/40747.html, Vestnik Kavkaza, Georgy Kalatozishvili, Tbilisi, Wed, 11/09/2011, http://vestnikkavkaza.net/

[2] Trabzon Declaration,Trabzon, 8 June 2012, www.mfa.gov.az , www.mfa.gov.tr, www.mfa.gov.ge

ներում համարկվելու ճանապարհին, ընդգծել տարածաշրջանային և միջազգային խնդիրներով ընդհանուր շահերի շուրջ խորհրդակցության կարևորությունը և հետագայում ընդլայնել խորհրդակցական համագործակցությունը գոյություն ունեցող մեխանիզմներով ՄԱԿ, ԵԱՀԿ, ԵԽ, ՍԾՏՀ, ՆԱՏՕ, ԵՄ և այլ կազմակերպությունների շրջանակներում:

- Նշել Ադրբեջանի Հանրապետության Լեռնային Ղարաբաղի և ԼՂ հարակից տարածքի շուրջ հակամարտության, ինչպես նաև Վրաստանի Աբխազիա և Ցխինվալի (Հվ. Օսիա) շրջանների շուրջ հակամարտության հնարավորինս արագ կարգավորման կարևորությունը՝ հիմք ընդունելով ինքնիշխանության, տարածքային ամբողջականության և միջազգայնորեն ճանաչված Ադրբեջանի ու Վրաստանի սահմանները; ընդգծել փախստականների, ինչպես նաև ներքին տեղահանված անձանց ապահով և արժանապատիվ վերադարձը իրենց ծագման վայրերը[1]:
- Խթանել հարաբերությունների հետագա զարգացումը բոլոր ոլորտներում, հատկապես առևտրի, էներգետիկայի, տրանսպորտի և բանկային գործի, շրջակա միջավայրի՝ համատեղ նախագծերի և համագործակցության ծրագրերի, անհրաժեշտության դեպքում՝ նաև եռակողմ համագործակցության մեխանիզմների միջոցով:
- Արտահայտել իրենց աջակցությունը ՏՐԱՍԵԿԱ-ին (Եվրոպա - Կովկաս - Ասիա տրանսպորտային միջանցք) և աշխատել Մեծ Մետաքսի ճանապարհի և Եվրասիական տրանսպորտային միջանցքի, ինչպես նաև երկաթգծեր և մայրուղիներ ներառող եռակողմ տրանսպորտային այլ ծրագրերի լայնամասշտաբ գործունեության վերականգնման ուղղությամբ, կարևորել նա-

[1] Այս կետով մատնանշվում են ոչ միայն «ԼՂ-ից և նրա հարակից շրջաններից», այլև ՀՀ-ից «ներքին տեղահանված» անձինք:

խատեսված ժամկետում Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթգծային նախագծի ավարտը, որի դեպքում դա Աքթաու-Ուրումչի (Ղազախստան-Չինաստանի Սինցզյան-ույղուրական ինքնավար մարզ) երկաթգծի հետ միասին կկազմի «21-րդ դարի Երկաթե Մետաքսե ճանապարհը»:

- Հաստատել Բաքվի միջազգային ծովային առևտրային նոր նավահանգստի կառուցման նախագիծը, որը Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթուղու ավարտից հետո կդառնա Արևելք-Արևմուտք Տրանսպորտային միջանցքի կարևոր օղակ, կարևորել Ադրբեջանի, Վրաստանի Թուրքիայի միջև համագործակցությունը՝ էներգետիկ պաշարներն Ադրբեջանից և Կենտրոնական Ասիայի պետություններից միջազգային շուկա տեղափոխող նոր խողովակաշարային նախագծերի իրագործման նպատակով:

Հարկ է նշել, որ կողմերի համատեղ փորձագետների խումբը սկսել է 2013-2015թթ. գործունեության ծրագրի մշակումը և համաձայնեցված դրույթները երեք նախարարների հաստատմանը ներկայացնելու աշխատանքները[1]: ԱԳ նախարարների եռակողմ հանդիպման երկրորդ նիստը տեղի կունենա 2012թ. երկրորդ կեսին՝ Վրաստանում, իսկ երրորդ նիստը՝ 2013թ. առաջին կեսին՝ Ադրբեջանում[2]:

Տրապիզոնի հռչակագիրը Թուրքիայի, Ադրբեջանի և Վրաստանի միջև ստորագրված նմանօրինակ առաջին պաշտոնական հրապարակային փաստաթուղթն է, բովանդակությամբ համարժեք ռազմաստրատեգիական փաստաթղթի:

2012թ. հոկտեմբերի 1-ին Վրաստանում տեղի ունեցած խորհրդարանական ընտրությունների արդյունքում հաղթանակեց «Վրացական երազանք» դաշինքը, որի ղեկավարը միջազգային օլիգարխիայի ներկայացուցիչ, միլիարդատեր Բիձինա Իվանիշվիլին է: Նա ստանձ-

[1] Trabzon Declaration,Trabzon, 8 June 2012, www.mfa.gov.az , www.mfa.gov.tr, www.mfa.gov.ge
[2] Նույն տեղում:

նեց պետության վարչապետի լիազորությունները, որոնք վերջին սահմանադրական փոփոխությունների արդյունքում դարձան գերակա: Դեպքերի այս ընթացքն առաջ բերեց մի քանի հարցադրումներ՝ կապված Վրաստանի հետագա քաղաքական դիրքորոշման հետ: Խոսքը, մասնավորապես, նախ Վրաստան-Ռուսաստան հարաբերությունների բարելավման հեռանկարի և ապա՝ Թուրքիայի ու Ադրբեջանի հետ հարաբերությունների հնարավոր վերանայման մասին է: Հարկ է նշել, որ դեռևս վարչապետ Բ.Իվանիշվիլու և նրա կառավարության վարած քաղաքականությունը հիմքեր չի տալիս որևէ էական փոփոխություն նկատելու թուրք-ադրբեջանական դաշինքում Վրաստանի ներգրավման ընթացքի հարցում:

Այսպես, 2012թ. դեկտեմբերի 26-ին Բ.Իվանիշվիլին Բաքու կատարած պաշտոնական այցի շրջանակներում հայտարարեց. «Ես որոշեցի իմ առաջին այցը կատարել Ադրբեջան, քանի որ մեր հարաբերությունները պատմականորեն բարեկամական են: Մեր նպատակն է խորացնել հարաբերությունները, հասցնել այն մակարդակին, որ միջազգային ատյաններում մշտապես հաշվի առնվեն ընդհանուր դիրքորոշումները: Մենք կանենք ամեն բան մեր հարաբերություններն ավելի ամրապնդելու համար»[1]:

Ուշագրավ է վրաց-ադրբեջանական տարբեր ոլորտների համագործակցության խնդիրների շրջանակը. Ադրբեջան-Վրաստան ավտոճանապարհների կառուցման ինտենսիվ ընթացքի ապահովում, Վրաստանում պարարտանյութերի գործարան կառուցելու ադրբեջանական նախագիծ, Ադրբեջանից գնվող էլեկտրաէներգիայի քանակը մեծացնելու Վրաստանի մտադրություն[2], «Ադրբեջան-Վրաստան-Թուրքիա էներգետիկ կամուրջ» նախագծի շրջանակներն ընդլայնելու և ադրբեջանական էլեկտրաէներգիան Վրաստանի և Թուրքիայի մի-

[1] Визит Иванишвили в Баку: Грузия остается союзником Азербайджана. http://azerros.ru/analytics/8963-vizit-ivanishvili-v-baku-gruziya-ostaetsya-soyuznikom-azerbaydzhana.html

[2] Նույն տեղում:

ջոցով Հունաստան և Բուլղարիա արտահանելու[1], ռազմական ենթակառույցներում համագործակցությունն էլ ավելի խորացնելու[2] հարցեր: Դժվար չէ նկատել նշյալ խնդիրների ռազմավարական նշանակությունն ու բնույթը: Ինչ վերաբերում է Վրաստան-Ռուսաստան հարաբերությունների հնարավոր բարելավմանը, ապա հարկ է նշել, որ այս ոլորտում զգալի փոփոխություններ դեռևս չեն նկատվել: Այնուհանդերձ, անգամ ռուս-վրացական դիվանագիտական հարաբերությունների վերահաստատումը չի կարող նշանակել թուրք-ադրբեջանական դաշինքին Վրաստանի մերձեցման գործընթացի խափանում, քանի որ վերջին տարիներին շարունակական զարգացում են արձանագրում նաև ՌԴ-Ադրբեջան և հատկապես ՌԴ-Թուրքիա հարաբերությունները:

Վերոհիշյալ փաստերը վկայում են, որ Վրաստանում իշխանության եկած նոր քաղաքական ուժը գործնականում շարունակում է Թուրքիա-Ադրբեջան-Վրաստան հարաբերությունների խորացման գործընթացը:

Այսպիսով, կարելի է կատարել հետևյալ հաստատումները.

- Թուրքիան և Ադրբեջանը վարում են Վրաստանի հանդեպ քաղաքական ու տնտեսական վերահսկման լծակներ ու մեխանիզմներ ստեղծելու աստիճանական և նպատակաուղղված քաղաքականություն,
- ներկա ժամանակահատվածում Վրաստանը շարունակում է ընթանալ Թուրքիա-Ադրբեջան ռազմաքաղաքական դաշինքում ընդգրկվելու ճանապարհով,
- Սամցխե-Ջավախեթիում թյուրքական տարրի գերակայության պարագայում Թուրքիա–Ադրբեջան դաշինքը վերահսկողու-

[1] Партнеры проекта «Энергетический мост» определяются с маршрутом экспорта электроэнергии в Европу, http://www.trend.az/capital/energy/2106707.html

[2] Азербайджан и Грузия обсудили вопросы военного сотрудничества, http://www.trend.az/news/politics/2099243.html

թյուն կհաստատի Սամցխե-Ջավախեթիի և Քվեմո-Քարթլիի օպերատիվ տարածքում:

Հիմք ընդունելով վերոնշյալը՝ կարելի է անել նաև հետևյալ եզրահանգումը. ընթացիկ գործընթացների արդյունքում, առավելագույնը միջնաժամկետ հեռանկարում, Վրաստանը կհայտնվի Թուրքիա-Ադրբեջան դաշինքի ամբողջական ազդեցության գոտում և վերահսկողության ներքո: Հետևությունը կարող է լինել մեկը՝ զարգացումների նման ընթացքը սպառնալիք է ՀՀ ազգային անվտանգությանը:

*Հոկտեմբեր, 2012թ.*

# ВОВЛЕЧЕНИЕ ГРУЗИИ В ТУРЕЦКО-АЗЕРБАЙДЖАНСКИЙ ВОЕННО-ПОЛИТИЧЕСКИЙ БЛОК

*Лия Эвоян*

Резюме

8 июня 2012г. в Трапезунде была подписана декларация между Турцией, Азербайджаном и Грузией, перенесшая существующие добрососедские отношения на качественно новый уровень. После смены власти в Грузии в результате парламентских выборов (1 октября 2012г.) возникли определенные сомнения в стабильности будущих развитий в разносторонних отношениях вышеназванных государств.

В статье предпринята попытка показать нынешнюю политическую ситуацию на Южном Кавказе, проанализировать развития турецко-азербайджано-грузинских отношений в контексте их возможных воздействий на регион и, в особенности, на Республику Армения.